ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է
1989 Թ.

ԱԶԳ

ՀԱՅՈՑ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՇԱՐԺՈՒՄ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԹԻՎ 152 (725) 10 ՕԳՈՍՏՈՍԻ ՇԱԲԱԹ 1996 Թ. ԳԻՆԸ՝ 50 ԴՐԱՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ֆելիքս Մամիկոնյանը դարձաբանում է

ԱՐՄԵՆԻԱ: Գերմանական «Ֆոկուս» պարբերականն իր վերջին համարում անդրադարձել էր Գերմանիայում Հայաստանի դեսպանության գործունեությանը: Հոդվածագիր Զոմմերի կարծիքով, Հայաստանից Գերմանիա մեկնած հարյուրավոր հայեր հանդիսանում են այն «անապատ տակառը», որից դեսպանատունն անընդհատ «գումարներ է քաշում»: Այդ մասին հաղորդել էր «Փաստ» գործակալությունը հղում անելով «Ազատություն» ռադիոկայանի հայկական բաժնին: Արմենպրեսի թղթակիցը դիմեց Գերմանիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆելիքս Մամիկոնյանին, խնդրելով գնահատական տալ այդ հրապարակմանը: Ֆելիքս Մամիկոնյանի կարծիքով, հոդվածը պատվիրված է, իսկ նրանում տեղ գտած բվերը շինծու են եւ անհեթեթ: Անշուշտ հյուպատոսական ծառայությունների մեծ մասը վճարովի է (դա համաշխարհային պրակտիկա է) եւ այդ գումարների հաշվին է գործում Հայաստանի դեսպանությունը Բոնում: 1995 թ. առաջին կիսամյակում դեսպանությունն աշխատել է մոտ 200 հազար գերմանական մարկ: Սակայն «Ֆոկուսում» նշված գումարներն ուռճացած են: Ամենաթանկ հյուպատոսական ծառայությունը՝ ՀՀ անձնագրի հանձնումը, արժե 700 մարկ: Դեսպանը նաեւ նշեց, որ դեսպանությունը ԳԴՀ իշխանությունների եւ հայ փոխադարձանների փոխհարաբերություններին միջամտելու իրավունք չունի եւ չի կարող ազդել իշխանությունների վերջնական որոշումների վրա՝ արտաքսել այս կամ այն անձին երկրից, թե ոչ: Դեսպանությունը կարող է միայն իր կարծիքը հայտնել, եթե հարցը վերաբերում է մարդու իրավունքների խախտումներին: Այդ ամենը դժգոհություն է առաջացնում որոշ հայերի մեջ, որոնք ամեն գնով ցանկանում են հաստատվել այս երկրում: Ֆելիքս Մամիկոնյանը, որը Մոսկվայում է եւ այսօր պետք է մեկնի Բոնն, ավելացրեց, որ մանրամասն կծանոթանա գործի էությանը, եւ բացառված չէ, որ դեսպանությունը կդիմի դատարան զրպարտիչներին պատժելու համար: Թեեւ, դեսպանը նշեց, որ հոդվածում ուղղակի մեղադրանքներ չկան, բայց դրանք երկակի իմաստ են նշանակում: Իսկ դա անթույլատրելի է, երբ խոսքը վերաբերում է Հայաստան պետությանն այլ երկրում ներկայացնող հաստատությանը:

Բորիս Ելցինն առաջարկել է

ԵԼՑԻՆԸ ՍՏԱՆՁՆԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ

Օգոստոսի 9-ին Մոսկվայում տեղի ունեցավ Բորիս Ելցինի՝ ՌԴ նախագահի պարտականություններն ստանձնելու հանդիսավոր արարողությունը՝ ինաուգուրացիան:

Փաստենք, որ ինաուգուրացիայի ծրագիրը արդեն հանդիսության օրը հիմնական փոփոխությունների էր ենթարկվել: Քաղաքական շիկացած մթնոլորտը, տնտեսական դժվարությունները, չեչենական պատերազմը եւ ծառայողական բարձրացան Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ Վ. Չերնոմիրդինը, Պետդումայի նախագահ Գ. Սելեզնյովը, Դաշնության խորհրդի նախագահ Ե. Ստրոեւը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիյ 2-րդը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Ն. Ռյաբովը, ՌԴ Սահմանադրական դատարանի նախագահ Վ. Տումանովը: Սպասկու աշտարակի ժամացույցի զանգերը հնչեցնում են Ռուսաստանի Դաշնության հիմնի մեղեդին. սկսվում է ինաուգուրացիայի գլխավոր մասը: Ոսկյա դռներից ներս է մտնում Բորիս Ելցինը: Նիկոլայ Ռյաբովը նրան հանձնելով ՌԴ նախագահի վկայականը, հայտարարում է, որ Բորիս Ելցինը ընտրվել է ժողովրդի եւ Բորիս Ելցինին է հանձնում «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի» շքանշանը նախագահական իշխանության խորհրդանիշը: Ողջերթի խոսքով ՌԴ ղեկավարին է դիմում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիյ 2-րդը: «Մաղթում եմ, որ Տեր Աստվածը մշտապես Ձեզ շնորհի իմաստություն եւ հոգեւոր տեսողություն, արդարացիություն ու գթասրտություն, հոգեկան ու մարմնական ուժերի կորով»,- երկրի ղեկավարին քարեմաղթում է պատրիարքը, նշելով, որ այսօր Ռուսաստանում շատերն են դժվար ապրում, եւ նրանք անկեղծորեն իրենց հույսը կապում են Բորիս Ելցինի հետ:

Հանդիսավոր արարողության վեր-

կանոնների քաղաքականության պատճառով:

Իրանը նախազգուշացրել է ԱՄՆ-ին...

(ՆՏ-AFP) - Ուրբաթ օրը ԻՐԱՆ պաշտոնական լրատվական գործակալությունը հայտնել է, որ Իրանի «Իսլամական հեղափոխության պահապանների» զորահրամանատարը նախազգուշացրել է, թե իր զորքերը պատրաստ են պատասխան քայլեր ձեռնարկել, եթե ԱՄՆ-ը փորձի Պարսից ծոցում ռազմական հարձակում ձեռնարկել:

Երկու երկրների միջև լարվածությունը մեծանալու կապակցությամբ Մոհսեն Ռեզային ասել է. «Մեր քաղաքականությունն առաջին քայլի կատարում չի ենթադրում, սակայն, եթե Միացյալ Նահանգները Պարսից ծոցում սխալ քայլ կատարեն, ապա նրանց ամբողջ զինուժը կշրջապատվի»:

Սաշիան հյուսիսային քաղաքում երեք ռմբակոծիչ նավ ասել է. «Եթե տարածաշրջանի անվտանգության նկատմամբ ոտնձգություն տեղի ունեն, ապա ԱՄՆ-ը դրա համար ամբողջապես կհատուցի»:

Նախազգուշացումը արվել է մեկ օր անց այն բանից հետո, երբ Իրանը պաշտոնապես հայտարարել է, որ ԱՄՆ-ի ինքնաթիռը խախտել է Իրանի օդային սահմանը Բուշեհր քաղաքի շրջանում:

Ապտամբները դուրս են մղվել կառավարական շենքից

(ՆՏ-AFP) Ուրբաթ օրը կատարի մարտերից հետո Ռուսաստանի դաշնային զորքերը դուրս են մղել չեչեն ապստամբներին Գրոզնու ռուսական կառավարության շենքից, որը նրանք գրավել էին նախորդ գիշերը: Կատարի մարտերից հետո, որին մասնակցում էին նաև ռազմական ուղղաթիռներ, ռուսական բանակը ազատագրել է նաև 20 լրագրողների, որոնք մեկ օրից ավելի շրջափակված էին դրսի բենզալցակայանում: Օգնության հասած զորքերը շրջափակումից ազատել են նաև մոտ 200 ռուսական զինծառայողների, որոնք պաշտպանվում էին պետանվտանգության ծառայության շենքում:

Համաձայն ըստ դաշնային հրամանատարության հաղորդման, վերջին երկու օրում ապստամբները կորցրել են ավելի քան 200 մարտիկ:

Օգոստոսի 9-ին ժուռնալիստների միության դահլիճում տեղի ունեցավ հանրապետության մի շարք լրատվական միջոցների ներկայացուցիչների հանդիպումը՝ նվիրված առաջիկա նախագահական ընտրություններին: Լրագրողների այս հանդիպման կազմակերպիչը Մամուլի ակումբն էր, իսկ ներկայացված ծրագիրը կազմվել էր ժուռնալիստների միության եւ Մամուլի ակումբի կողմից: Մշակվել էր որոշման նախագիծ (հայերեն) եւ առաջարկություններ (ռուսերեն) ՀՀ նախագահի ընտրությունների ընթացքում մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների կարգավիճակի մասին, որը պետք է ներկայացվեր ԿԸՀ-ին: Նախագիծը ընդգրկում է լրագրողների հավատարմագրման կարգը, նրանց գործունեության ապահովման երաշխիքները եւ լրագրողի պարտականությունները:

Հանդիպման ընթացքում նշված հարցերի շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, արվեցին բազմաթիվ առաջարկներ, որոնցից ի վերջո համընդհանուր ընդունելության արժանացան երեքը. 1. Ընտրարշավի ընթացքում ձեւավորել «Լրագրողների հասարակական խորհուրդ», որի դերը ԿԸՀ-ում լրագրողների շահերի պաշտպանությունն է եւ նրա հետ մշտական կապի պահպանումը 2. ԿԸՀ-ում լրատվական յուրաքանչյուր ծառայությունից պետք է լինեն մեկական լիազորված լրագրողներ (որն արդեն համաձայնեցվել է ԿԸՀ-ի հետ), իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կարող են հետեւել մեծ թվով լրագրողներ: 3. Ընտրական մարզային եւ տեղամասային հանձնաժողովները պետք է ունենան լիազորված անձինք՝ լրագրողների հետ աշխատելու համար (ԿԸՀ-ում այդպիսի լիազորված անձ կա):

Լրագրողների հանդիպման արդյունքում որոշում կայացվեց նախագիծը եւ առաջարկությունները ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Այսուհետ «Կլոր սեղանի» հանդիպումները կկրեն ամենշաբաթյան բնույթ:

ՎԱՂԻՆԱԿ ՅԵՐՏԵՐՅԱՆ

ԿԱՊԵՐԸ ԽՈՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Երեկ Հայաստանի գրողների միությունում տեղի ունեցավ հանդիպում իրանահայ գաղթօջախի պատվիրակության հետ...

Նախ, հարկավոր է նշել, որ մեր ստեղծագործական միությունները, հաշվի առնելով ներկայիս իրողությունները, վերանայում են իրենց «ավանդական» աշխատելաձեւերը: Այսպես, Հայաստանի գրողների միությունում ստեղծվել է միջազգային կապերի բաժին, որի գործունեությունն ուղղված է մեր երկրի մշակութային առնչությունների զարգացմանը: Ինչպես քաղաքական ու տնտեսական կապերում, այստեղ նույնպես մեծ կարեւորություն է տրվում մեր երկու խոշոր հարեւաններին՝ Ռուսաստանին եւ Իրանին: Սակայն մենք պատրաստ ենք լավ հարաբերություններ հաստատել բոլոր երկրների հետ, որոնք շահագրգռված են Հայաստանի հետ բարեկամություն հաստատելու մեջ:

Այս առումով հատկանշական է Իրանից ժամանած պատվիրակությունը, որի կազմում այս երկրի հայ համայնքի ներկայացուցիչներն են: Էդիկ Բաղդասարյան (Գերմանիկ), Հրաչ Ստեփանյան, Էդիկ Մեհրաբյան, Սիմոն Խաչատրյան, Ռուբեն Ավագյան... Անունները, որ հայտնի են իրանահայ գաղթօջախում:

Բացելով ցերեկույթը, ՀԳՄ վարչության նախագահ Հրանտ Մաթեւոսյանը նկատեց, որ մեր երկու երկրների սահմանները բացվել են: Առաջինը ինչպես պիտի լիներ, փոխադարձ այցելությունները սկսել են քաղաքական գործիչները, այնուհետեւ գործը շարունակել ձեռներեցները: Հիմա հերթը հասել է մշակույթի գործիչներին: Եվ իրանահայ մտավորականների պատվիրակությունը երկու երկրների կապերը խորացնելու գործընթացի տրամաբանական շարունակությունն է: Ի դեպ, ինչպես ասաց ՀԳՄ վարչության քարտուղար Աբգար Ափինյանը լրագրողներին, սպասվում է Իրանի գրողների մի պատկառելի պատվիրակության այց մեր երկիր...

Հյուրերին հանդիպմանը մասնակցող գրողներին ներկայացրեց Երեւանի համալսարանի շրջանավարտ, գիտությունների թեկնածու, իրանահայ Անդրանիկ Սիմոնյանը: Այնուհետեւ Իրանի պատվիրակության անդամները պատմեցին ինչպես մեր հարեւան երկրի, այնպես էլ տեղի հայկական համայնքի մասին:

Իսկ պատմելու շատ բան կար, քանի որ կրոնական եւ ազգային հանդուրժողականությամբ հայտնի այս երկրում լավ պայմաններ են ստեղծված մեր հայրենակիցների համար: Իրանում հիմա կան 32 հայկական դպրոցներ, լույս են տեսնում թերթեր, ամսագրեր, գործում են մշակութային եւ մարզական ակումբներ: Մեր երկրի անկախության հետ իրանահայերը հնարավորություն են ստացել զարգացնելու կապերը իրենց պատմական հայրենիքի հետ:

Ցերեկույթը, որ անցավ ջերմ, անկաշկանդ մթնոլորտում, հայ գրողներին եւ հրավիրված լրագրողներին շատ կողմերով ծանոթացրեց մեր դրացի պետությանը, նրա բարի եւ աշխատասեր ժողովրդին: Մի ժողովուրդ, որ այս դժվարին ժամանակներում անշահախնդիր բարեկամության ձեռք է մեկնել մեզ...

Գ. ԳՈՒՐԳԵՆՅԱՆ